Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Ապրիլ 18-ին. Թիֆլիս. №16.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐՈՆՆԵՐԸ



ԱՐԵՒԵԼՔԸ ԱՅՐՒՈՒՄ Է...

## ԱԽԱԼՑԽԱՅՈՒՄ

*«Ղաթարալայի» սպեօրները եւ տեղի քաղաքագլուխը*



Քաղ.—Ինչու՞ համար էք նեղութիւն կրել:

Սապ.—Կուզէինք իմանալ հայոց դպրոցները ո՞րտեղ են գտնւում, որ Բաւթառ շան գլուխը տեղահան անենք:

Քաղ.—Բաւթառ շան գլուխը՞... բայց դա ամէն տեղ կայ, որտեղ կան հայ վարժապետ, հոգաբարձու, տէրտէր և տիրացու:



### ԳԱՄՂԱՆ ԾԻԾԵՌՆԱԿ

—Բռնիր բռնիր նրան, նա կարող է փա-խւած լինել:

—Կարող է խոյերս ունենալ, ազգարմնա-կութեան մէջ տարածել:

—Կարող է և կարմիրներից լինել. բռնիր բռնիր նրան:



### ՀԻՒՐԱՍԷՐ ՏԻԿԻՆԸ

—Խնդրեմ անուշ արէք, սա յատկապէս ես եմ պատրաստել:

—Շնորհակալ եմ, ես արդէն երկուսը կերայ:

—Ճիշտ չէ, դուք թէև երեք թէ չորսը կերաք, բայց և այնպէս, անուշ արէք խնդրեմ:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Ծրգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր.
Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր.

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.
Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.
Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

## ՄԵՐ ԿԱՐԻԿԱՏՈՒՐԱՆԵՐԸ

### ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎԱՆՔԸ ԱՃՈՒՐԴԻ

Պօլսի ազգային ժողովն իր վերակենդանութիւնից յետոյ, մեծ մեծ բաներով է զբաղւած։ Այնտեղ վճռում են, որ երկծայն, եռաձայն, եւ քառաձայն խմբերը չեն կարող երգել եկեղեցիներում, իսկ կանայք, Աստւած ազատէ, իրաւունք էլ չունին Արարչին փառաբանել երգաձայն։

Սակայն նոյն ազգային ժողովում, հարց է ծագում՝ Երուսաղէմի վանքը վաճառել մի քանի միլիոնով, որպէսզի, թէ վանքի 30,000 ոսկու չափ պարտքը հատուցի՝ եւ թէ մեր ազգային ջօջերը ուտելու բան ունենան։ Պօլսի այդ պատգամաւորները յիշեցնում են Անառակ Որդու պատմութիւնը, որ ոչնչի շնորք չունենալով հանդերձ, ազգի գլխի-փրկիչների նման, փոխանակ վանքը ազատելու ապիկար, գող ու աւազակ միաբաններից, վաճառքի են հանում այն, որի համար իրենք երբէք չեն աշխատել։

Թւում է որ վանքը ծախելուց, ուտելուց եւ մարսազարդելուց յետոյ, մեր ջօջերը եւ իրենց կանանց ու որդոց պէտք է վաճառեն, որովհետեւ ուտելու կարիք կունենան, իսկ գործից էլ կը փախչեն։

---

## ՊՕԼԻՏԻԿՈՒՐԻ ԸՑԽՐՋԵՄԻՆ

### ՍՈՒԼԹԱՆԸ ԹԱԽՏՈՎ ԲԱԹՄԻՇ ԷԼԱՒ

Սուլթան Աբդուլ Համիդը, էն վուր կարասուն ու երեք տարի՝ արին ու սուր, կրակ ու հուր էր երքում, էսօր բաթմիշ է էլի։

Ու աչքն էլ դուս է էկի։

Աբդուլ Համիդը, վուր խալխի համա էնենց էր, վունց վուր օցը, էսօր կի էնենց է գիժիր նընգի, վունց վուր ինքը գիժիր էր գցում, խխտում, բըռնում, քերթում ու ռահաթի հաքին հանում։

Ու հախնէ իրէն, աչքն էլ ին հանի։

Զունքի սուր միկալնուցը, սրով կումեռնի, կսէ Աւետարանը։

Մաշ։

«Ով սուր առնիցի, սրով մեռնիցի»,

Էս խուսկիրը ինչի համա ին ասի. դուք հէնց գիդիք, թէ Աւետարանում, մի-մինձ փիլիսոփէքի գրերում, ան «Խաթաբալում» գրածնիրը սուս ին։

Չէ, եանըլիշ իք։

«Բարի ազագէf», կսէ, չունքի մարդս մինչկի ապրում է, մենակ մէ բան պիտի անէ՝ բարիք ու լաւութին։

Սուլթան Աբդուլ Համիդը, բարիքը չարիք էր գիդում, վունց վուր շատ տեղերում խալխի ազատութինը ոտ-գու ու շանտաժի մէջն ին գթնում։

Սուլթան Աբդուլ Համիդը, արինը՝ իծի կաթնի հանգի էր խմում ու թէ վուր բլում էր. հայ արին, էս խօ շոկոլաթ էր շինում

Խալխի գինիլը, իրաւունքների չը ճանչելը, պարապ չը կատարելը, էսօր թէ էրուց՝ ադարդ կու կարի, ախրի հանգը՝ առչիւդ կու չաքի։

Ու օչով չասէ թէ՝ աշխարհս դժակ է ու դուն էլ դաւճակ՝ միկայ կերի ու կեր.

Էս գիփ բլում է էնդդամ, մինչկի մարթս հարփած է։

Մարթս ինչ է։

Մարթս, ղուրթ է, Աստու ստիղծած ու իր ամկութար փաթրեթով օրմին է, մազբամ գազաններումէն ամենաբեթարը, ամենաանչնորհակալը, ամենաանսովիրաը էլի նա է։

Ինչի՞ ախպէր։

Զունքի մարթս էս թաւուր խասիաթ ունէ։

Խուսկիս թէ չիք ասում, անհէք խաօրլէն, անհէք ամեն մէկդ ձիգ ու անդդեցէք ձիր բոլոր ճանաչներուն, բարեկամներուն, համփօոններուն, թէ վուր դուրթ չիմ ասում, գուցիք ձիր խաթրու՝ շորափումը, Փունիկուլօրի վրէն քէփ անիլ ուէք։

Համա, թէ վուր դուրթ դուս -էկաւ խուսկս ու գակօնիցն էլ անց , էն չախը ինչ կօսիք։ Գիդիմ թէ ինչ կօսիք. գուցի՞ք ասիմ՝ «Խաթաբալէն» կու միկալնիք հարինիցը, մուքթա կու կարթաք, կու ծիծաղիք, մէքիչ փիքը կոնիք, իժում թաքուն դըող կու դնիք ու սուս ու փուս դուս կեհաք, միթոմ վունչինչ։

Է՞, լօթի՛ք, ում հիդն իք մալադնիր խաղում ու մուքթա—մուքթա գազէթ կարթում։

Խօ կարթում իք, բա էլ ինչ է վուր էրկու շաու համա դայրաթ իք անում ու դուղութին անում, քէլէխ ուտիլ սովրում։

Դուք էլ էնենց իք անում, վունց վուր շատերը. եգնիրը լծնիցը հանում իք, գոմշնիր իք լծում։

Գոմշի լիզուն էլ դուք չիք հասկանում, վունց վուր Սուլթանն էլ իրա խալխի լիզուն չէր հասկանում ու վիրչը խալխն էլ իփ վուր տեհաւ, վուր չէ, բօշադաճ փաշա օյմազ, Աբդուլ Համիդը սուլթան, փադիշահ չի ըլի, թախտեմէն վէր գցից, թէրից էրեսին, համուսին, հասկացրից իրա լըփութինը ու շան հիդ բարեբրացրից էն մարթուն, վուր ջէր էրէգ թաքաւուրների թաքաւուրն էր, ամէնի տէրը, ծովերու իշխանը, սարերու կնիազը, հազարաւոր սիրուն ճնդդերանց......, հազարաւոր որթկերանց հէրը, միգինրու մինձը, զօրքի առաչնութը, (Սաթունով սրփադանի հանդը չը գիգենաք) Մահմէդի նաալեդնիկը ու միթոմ էլ, Աստու աչկը երգրիս վրէն։

Էսադանց ինչ իմացար։

Էն վուր, մարթս ինչդդամ մինձանայ, ինչդդամ փքւի, ինչդդամ տրաքւի, իրա գլուխը մէ մինձ բան չը պիտի գիդենայ, չունքի ով գիդի, էսօր

էսենց է, էլուց ինչ կուզի։

Մարթս խրանից բանցը չը պիտի թաչի, թէ չէ՝ թաչելիս էնէնց կու թրը՛խկա, վուր քու հանածը։

Սուլթան Աբդուլ համիդը, Աստուծ կարէ նրա անումը, վունց վուր կըտրից, խօ ջէր կէնքի մէչ. օխչումը գիգենայ, մարթու չիմ անիծի, համա թէ կու անիծիմ, էրթում կուտիմ, վուր խուսկս ու մուրազս կու կատարուի, էս եարսուն ու իրիք տարումը, աչխրքիս ամենափիս մարթուցը, ուփրո փիսն էր։

Ու ինչ տարաւ։

Թուք ու մուր։

Բաս վուր ձիգ էլ, միր ասկի գործիչնիրին էլ, հաու «փրգիչնիրին» էլ՝ էչմիածնի գիփոցնիրուց էլ, միր գագէթաջինիրուն էլ ասում իմ, թէ խելօք կացէք, ազարնիրդ մոիկ ուէք, խաօրին միաք դցէք, ինչնիրուդ ճանչնացէք, ուրիշնիրուն պատիւ արէք, վուր ուրիշն էլ ձիգ փառք ու պատիւ տայ, դուք վուր չիք հասում ու լսում, իժում, իժում չիք վախում, տօ բեդասնիր, տօ յօթիք, ու ինչ կուզիք ինձմէն, մինչևի ինչ պիտի խ չալիշ գամ, վուր դուք բոլորը ու միրի յիշած խարա-խուրէքն էլ մօղարած մաց դառնար։

Մարթ էլ կայ, մարթ էլ։

Հիմի Մեսրոփ վարթապիտն էլ մարթ է, ու Ներսէս կաթղիկոսն էլ՝ էն չախը, խի վուր նա վարթապիտ է՞ր։

Խլիտամար Միքէլոն էլ մարթ էր ու հիմիգուայ «փրգիչնիրն» էլ մարթիք ին։

Ուսրէցն էլ ձուգն է, թարթին ու գութխին է՛ր։

«Գուրձն» էլ գաղէթ է, „Русскія Вѣдомости"-ն էր։

Վարանցօվն էլ մարթ է ու Գալիցինն էր։

Արծունին էլ պուրլիցիստ էր, Լեոն Գանէլոնն էր։

Արգար Օհանէսովն էլ խմբագիր էր, Օհանէս Մալխասովն էր։

Սունդուկովն էլ դրամատուրգ է, Փափազէնց Վրթանէսն էր։

Նախչեւանն էլ քաղաք է, Պարիժն էր։

Գօգօլն էլ հանաքչի էր, Բուդդան էրիցովն էր։

Նաստրենգին Շահն էլ շահ էր, սրա թոռ Մամէդ Ալին էլ շահ։

Հա գուրթ վուր միտս ննգաւ։ Աչխրքի վրէն, վրայ էրկու մուտասար Սուլթանից եղը, էս բեդասը ու պըրտակերէս մաշադին, Մամէդ Ալին դուս էկաւ։

Ո՞ւյ խօ դրա տուտուց մարթ տադին ինչ տախիմ։

Տօ, դրա ինչ բանն է շահութինը, դա պիտի էտի միր պէտրած Թիֆլիզ քաղաք գայ, էտի բաղնուղի ծախէ, ան թէ չէ քուրախանէքումը ալիզ չինէ ու պրուն հագրէ։

Ափսուս, էրկու տարի առաք վուր էտի էր էլի, լաւ կուլէր, չունքի քեաշի էլ կուլէր։

Աբդուլ Համիդի թաւուր, սրա օրիրն էլ համբրած ին. խօ տեսնում իմ մուտատ մարթը, շատ չի կանայ մատաութին անի, էտ ախմախը. հէնց գիդի, թէ շահութինը, մէ խէրով բան է, վուր լաւ բան ըլէր շահութինը, բամինք, հայիրս ան շահ կու ձայինք, ան վրացիքը, ան օսիքը, ան եզդիքը ինչի սակութար շահիր չունինք. չունքի, շահութին անիլը ախմախութին է։ Շահն էլ ախմախ է, վուր շահութին է անում. տօ, վիկինայ դուս գայ Թէյրանէմէն. գա, էտի, իժում ինչ գուզին անի Սաթարն ու Բագիր խանիրը, միրշը գրանք էլ շահիր կու դառնային ու շահ ըլելով, պատուհաս ու պատիժ կուլէին խալխին. միրշն էլ սրանց հիդ խալխը էնենց կու վարուէր. վունց վուր Մամէդ Ալու հիդ, միրշն էլ. էն կուլէր, վուր շահութին անուց մարթ չէր ճարուի, իժում էլի Մամէդ Ալուն. վունց վուր ուփրո ախմախին, կու կանչէին իրա տիղը Թէյրան։

Արա հիմի ինչ է։

Շահն էլ կարծեցի է միթթօմ թէ՝ մինք ու ինքը մէ թաւուրնիր ինք էլի։

Եանգլիշ է էկի։

Ջէր ռազ. դյա տրեն չէ իմացի, վուր իմանայ. խիլքի գուքայ։

Էսենց, գէթաղուայ, ամեն բան ուզեցէք, միշտ լաւ կացէք, թաք սուլթնութին ու շահութին չուզենաք. ինչի վուր, մարթ վուր սուլթան, ան շահ է դառնում, ջէր մէկ վուր աննմարտութին է անում, իժում էլ վուր խիլքը կորցնում է, իժում էլ էն վուր՝ խիստ է բանցրանում ու բանի վուր մարթս բանցրանայ ու բանցրիցը դիվիր ննգնի էն չախն ուփրո խիստ է ջարթ ու փշուր ըլում, վունց վուր սուլթանը ջարթ-փշուր էլաւ։

Դատալար Եսայեանցեանց

## ԱՆԿՈՒՇՏ ԱՐԱՐԱԾՆԵՐ

Հորթարած էիր—քահանայացար,
Բանտւոր հօտին դու հովիւ դարձար.
Առաջ մերկ էիր և կերրդ—մախոխ,
Հիմակ ապրում ես՝ լի՛, փաթթած և ճոխ...
Բայց դո՞ւ չես դարձել... Աչքածակ, յիմար,
Էլ ինչ ես ուզում՝ գո՞րդ, թէ՞ գանբուռմար...

Կար ժամանակ, որ առած մի քրթոց,
Նուէթ էիր ծախում փողոցէ փողոց,
Հիմա, փառք Աստծու, ունիս գաւօղնե՛ր,
Եռյարկանի տուն, նաժիշտ, ծառանե՛ր...
Բայց դո՞ւ չես դարձել... Անկուշտ ուտղակ
Էլ ինչ ես ուզում՝ ստրնած թե՛կ, թէ՞ կրակ։

Ոստիկանի մօտ էիր գրագիր,
Որի գաղտնիքը գիտէիր անգիր.
Նա կաշառքը միշտ կիսում էր քեզ հետ.
Վերջն էլ դառար ոստիկանապետ...
Բայց դո՞ւ չես դարձել... Ծառայ անիրաւ,
Էլ ինչ ես ուզում, քա՞ն, թէ՞ չոռ ու ցաւ։

Տպարանի մէջ դու շատ քաշեցիր,
Տանը չարչարելով կեանքդ մաշեցիր...
Այժմ խմբագիր ես, եկամուտ էլ յորդ,
Ունիս տաս հազար ուել բաժանորդ...
Բայց դո՞ւ չես դարձել... Ով դու վատաբաղդ,
Էլ ինչ ես ուզում՝ հարիւր, թէ՞ ժանտախտ։

Բալախանում չոր պաշտօն դու ստացար,
Մի մեծ ֆիրմայում եղար կառավար.
Վերջը ֆիրմայի փայն նրատեցիր
Ու դատարանում—փողով մաքրեցիր...
Բայց դո՞ւ չես դարձել... փողապաշտ աղան,
Էլ ինչ ես ուզում՝ կախաղա՞ն, թէ՞ մահ։

Ութ տարի առաջ հացած ցնցոտի
Թափառում էիր Բագւում—անօթի.
Հիմակ եղել ես կուսակցական շէֆ,
Ճառեր ես խօսում և քաշում բօլ քէֆ...
Բայց դո՞ւ չես դարձել... Այ անպող հայւան
Էլ ինչ ես ուզում՝ ա՞ւր, թէ՞ գերեզման...

Երեսուն տարի անյայտութեան մէջ
Մաշեցիր կեանքդ—ի սէր քո ազգի.
Բայց խե՜ղճ Լիլիպուտ, չունեցար մի խէչ,
Որ ծեր օրերիդ նա նեցուկ լինի...
Սակայն դու ազգից չես ուզում հազար,
Այլ լոկ կըրում ես խաչըդ—տանջաչար։

Լիլիպուտ

## ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

### ՆԱՄԱԿ ՊՕԼՍԻՑ

II

9 ապրիլ

Գասպար ջան.

Ի՞նչ ասիմ, ինչ գրիմ, տօ, էտի էս անտէր Պօլսում, հայն խօ հնձնոս է, թուրքը

տրաքը, բերձնը, բոլղարը, սրանք էլ պակաս չեն. եւ որ քու տեղը լինէի, Սասմապոլի անունը կը փոխէի տայի, կասէի որ՝ Ծառմբոյ, Կօստանդնուպոլ չկա՛յ.—կայ քաղաք Հոս-հոս։ Մէ բուլբուլաճի պէս խասխաթ ունին էս հէր օխնածները. ընդինի հանգի վառւում են, քացախի պէս թըթւում, գարչիցի պէս գառնանում, մեղրի նման քաղցրանում.

Սուլթանից սկսած մինչև վերջին զապթիէն, էսենց խասխաթ ունին։

Էս կի չէ ու, հիմի ինչ ցօցիալ ուտելու ժամանակն է։

Գասպար ջան, էսի, Թիֆլիզում, որ աչքիդ բան էր ատում, ան Կախէթին խմում, ինչ կլի, տօ լօթի, իմ անունն էլ յիշէք ու տաէք՝ Տիրլիփօ Արշակ. չոռ ուտես ու խրմես, որ սիրուն Թիֆլիզը թողած, ապաբաշ ննզար ու գնացիր Պօլիս։

Ա՜խ, հայոց թատրոն...

Գասպար ջան, գուլաւէքի գուլոցը որ յաւմեմ, կարծում եմ թէ Մանջուրիումն եմ ապրում. զ՜զ՜զ՜... բո՛ւմը, տա՛-տա՛տա՛ գո՛ւմը... հը՛, ի՞նչ է, գիդեմ կը հասկնես։

Մէ-մէ անգամ էլ կարծում եմ, թէ Թատրոնում Արշակ II-րդ ենք խաղում։

Համա Սուլթանն էլ ինչ խելօքն է գիտեմ. Կարապետ Շիրինեանը գլուխը քարովն է տալ, սրա աներեւութեան դէմ։

Աբդուլ-Համիդը հէնց որ տեսաւ զօրքի մօտենալը, մեր Ալէքսանդրէ Ծատուրովի պէս ֆրօնտը փոխեց։

Առաջի օրերը կի լրբարար դուրս էր գալի սելամլիքին ու խալխին բարեւում էր էնենց, կասես թէ՝ ոչքի մաղէն էր։

Վերջերն տեսնե՞ս, Գասպար ջան, ինչ օյինբազն է եղե՛լ, ջէր էղաեղ ինչ էր՝ երկերեսանի, մեզայ Աստծու, հազար երեսանի, ամենքի հետ սիլի-բիլի. տօ՛, դա էղաեղ համ մշակականներին էր խաբում, համ դաշնակցականներին, համ հնչակականներին, համ պատրիօտներին, համ հորդարականներին էր, համ էլ միթամ ցօցիալ մէկրամիստէ։

Էսաեղ ախրօ երեւ աաւ, ինչի որ իրա հանգի մարդիկ հազարներով կան էսաեղ. համա նա ուրիշն է։ Հ՞ը, յօրեկեանը ինչ սարքե՞ց։ Աստւած ոչ գիդի սրա գլուխը, Սուլթանի հանդը սա էլ ամենին խաբեց, թէ ինքը ասկի համար աշխատել է, բայց իրա օրումը մէ Բաղդասար Աղբարից աւել բան չի խաղացել ու չի էլ կարայ։

Լաւ բան արիմ, տօ լօթի, ինչ կը տաս որ ուրախացնեմ։ Տիլի-Գուճուրում բլում են, վերջին անգամ որ գնացինք, խաշը յաւը չէր, խորւած ամսարենին էլ, լիմոն չէին արել։

Ջարաբը ինչ է անում, սրա զօրաններից է դա էլ ա՛յ. տօ՛, դա խօ քաղկցի է, էսենց ինչի գուս էկաւ։

Է՞հ մարթ ինք էլի։

Հա էն էի ասում, Սուլթանը՝ որ տեսնում է, թէ բանը խիստ ճանապարհէլ է, վեր է կենում ու մեր Իզմիրլեան կաթողիկոսի մօտ իրա ադիւտանտներից մինին ղրկում է, ջէր շնորհաւորում է, կաթողիկոս հասատաւելը, յետոյ էլ մեզայ է խնդրում, որ հարիւր հազարներով հայեր է կոտորել տւել, երկիրը քարուքանդ է արել. վերջն էլ աղաչել է թէ, սրտվհետեւ ասմէ, դու էլ գնում ես ասմէ, ու իմ մեղքերն էլ շատ են ասմէ, ու զուզեմ ասմէ, որ հանգիստ մեռնեմ, ու էս ջէհէլ ջուհուլներից էլ գլուխս ազատեմ, ասմէ, խնդրում եմ խոնարհաբար, ասմէ, ինձ էլ հետդ տար էջմիածին, ասմէ, իմ հարէմով ու զաւակներով, ասմէ, եւ էնդեղ կնդունեմ Լուսաւորչական սուրբ կրօնը ասմէ, չունքի որ մերս էլ հայ է եղել ասմէ, ու ասում են, միթամ հէրս էլ հայ դուրգալ է եղել ասմէ, իժում, թէ որ ինձ վարդապետ էլ կօծնեն ասմէ, էս էլ խօ խիստ լաւ, ասմէ։ Ու յետոյ եա գիտեմ, թէ ինց եմ իմ խելքով օգտակար լինում ձեզ ասմէ։

Կաթողիկոսը ասում է՝ ջէր մէ քիչ համբերիր ասմէ, մինչկլի մէ քիչ փիքը անիմ ասմէ, բայց և այնպէս, եթէ հարէմ մարեմով էլ տանեմ էջմիածնի ասմէ, թէեւ միաբանութիւնը դէմ չի լինի ասմէ, էս բանին, բայց Սինօդը կը պահանջէ ասմէ, որ գոնէ մի վեց ամսով քեզ, սակութար Սուլթանից, Սեան ուղարկենք, ասմէ, ապաշխարանքի համար ասմէ։

Հիմա բանը էդպէս է, Պարլամէնտը որ լսել է կաթողիկոսի ադրիւրներից, թէ Սուլթանը մտադրել է փախչել էջմիածին հարէմով, խեղճացնելիս Սուլթանին հրաժարեցնելու առաջարկը յետ է վերցրել։

Էստեղի զենեռալիտէտը մէ ուրիշ թաւուր բան է։ Պօլիսը համարեա վերցրել են, համա համ քիչ ջարդ եղաւ, համ էլ հայերի անեըը, մազաղիններն ու ուսումնարանները չայրեցին, ինչ որ ադաթ է։

Ասում են միթամ Ադանա քաղաքումը հայն ու թուրքը իրար կոտորում են։

Գասպար ջան, արա մէ դրի շուտով, հասատանմ էս բանին, սխար վա՞նց թէ, հայն ու թուրքը մէկմէկու կոտորում են, հայն ինչ իրաւունք ունի կոտորելու, զակոնով մենակ հայը պէտք է կոտորւի, էսէնց չէ՞, արա մէ զակոնները տես։

Ճամփու խարջլուխ հաւաքեցի՛ր։ Ուղարկիր էլի՛, հէր օխնած, դուն էլ խօ էն մէկէլները չըտաս։

Էսօր ճաշելիս արցունքով լցեց աչքերս։ Ով գիդի ինչ թաւուր կանաչեղէն կայ քախկումը. էս տարի բոլկն ու տարխունը ի՞նց է, լաւն է, էժան է. էսնի էլ կայ, համա էն չէ, ինչ վուր էսի է։

Մնամ քո Արշակ Արութինով

Տպելու համար արտագրեց՝
Պօլիտիկոս



## ՈՒՂԵՂԸ ԽԱՌՆԻԱԾ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՄՏՔԵՐԻՑ

Մեծ գաղափարը, փոքր գլխի մէջ, նոյնքան վտանգաւոր է. որքան եւ ջուրը սառը ապակեայ ամանի մէջ։

—

Երեխան երբ սէր-չունի դէպի իւր մայրը, նա ապագայում էլ սէր չի ունենալ դէպի իւր շրջապատը—մարդկանց։

—

Երիտասարդի փառասիրութիւնը, կարելի է ներել, բայց փողասիրութիւնը ոչ երբէք։

—

Ժլատ մարդը եթէ հնար ունենայ, արև կը դառնայ, այնժամանակ մի թաշկինակը 10 կոպէկով չի չորացնի։

—

Հրեշտակը համբերող և բարի հոգու տէր է, բայց երբ ժամը հասնում է, մարդուս հոգին է առնում։

Հետաքրքիր լինել լաւ է, բայց ոչ անհամեստ բաներում։

—

Ցուսով ապրել լաւ բան է, եթէ յոյսերն էլ մի բանի նման է, հակառակ դէպքում—նշանակում է ինքն իրան խաբել։

Մ՛ռՆ-Սի

## Բանաստեղծական ??? ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Զրաբաշխական կատակերգութիւն
թէ՞ հրաշափառ խայտառակութիւն

I

Շատ վաղուց էր երևանցին
Սպասում էր ջրի հարցին.
Քանի տարի նա համբերեց,
Կարծես մի կերպ գլուխ բերեց,
Ինքը հարիւր և մէկ թւին
Գործը ուժին կապալառուին
Որ քաղաքում կօնկայ շինեն
Ղրխ-Բուլաղիցն էլ ջուր բերեն։
Երեք տասը և վեց տարով,
Կոնցեսիայի իրաւունքով.
Հինգ տարւայ մէջ պէտք է շինէր
Երկու գործն էլ վերջացնէր։
Թէ երկուսից մէկը չ՚շինէ,
Քաղաքը միւսին տէր կը լինէր.
Երկու հարիւր հազար վեդրօ,
Նա օրական ջուր պէտք է տար.

Երեք վեդրօն մի կողկէով,
Այս հաշւովն էլ փողն առանար։
Քեռնարկելի երկու գործից,
Բան տակոս գուտ վաստակից
Նա պէտք է տար մեր քաղաքին,
Մինչ պայմանի վերջին տարին։
Կապալառուն մեծ յոյս ունէր,
Որ ձիաքարշը փող կաշխատէր.
Այնուհետև հեշտ կը լինէր,
Մեծ ջրանցքը կառուցանել։
Ձիաքարշի տւած հաշւով,
Բուզալտէրի մաքուր ձեռով.
Ցոյց է տւած երկու տարի,
Դեֆիցիտը եօթ հազարի։
Աստու տւած զորութիւնով,
Եւ պայմանի ուղիղ մարով.
Մենք ազատ ենք այդ վնասից,
Ինչպէս մի մեծ պատուհասից։

II

Ինչը հարիւր և վեց թւին,
Հայ-Թրքական կատրածին.
Նզովք, անէծք չար պատճառին,
Մեր քաղաքի սգի տարին,
Կապալառուն միտքը փոխեց,
Ջուր բերելուն միջոց խնդրեց.
Այն օրւանից մինչև այսօր
Բանը ընկել է օրեցօր։
Երկար ու կարճ մտածեցին
Վերջը խնդիրը յարդեցին.
Տւին նրան երեք տարի,
Որ ջրանցքը պատրաստ լինի։

III

Նոյեմբերի անցեալ աշնան,
Քաղաքացիք երբ որ տեսան.
Կապալառուն ջուր չի բերում
Եւ ոչ ջրանցքին ձեռնարկում
Սկսեցին տրտունջ յայտնել
Եւ շատերին էլ համոզել,
Համաձայնւել «Նորքա ջրին»
Որ քաղաքը ինքը բերի։
Կամ նորից տալ կապալառուի,
Էլ չ'սպասել ոչ մի բանի.
Միայն մեզ տան ջուր խմելու
Առանց մի օր յետ ձգելու։
Հոգի ունիմ Աստուն տալու,
Պարտաւորն եմ ճիշտն ասելու.
Բանը հասաւ լրագրին,
Սրա մասին շատ գրեցին։
Այդ գործի մէջ մի առանձին,
Ջանք է թափում գրչով էմին.
Խիզախաբար մի աջ, մի ձախ,
Միշտ գրում է շատպ, անվախ։
Մեր խորհուրդն է խմբագրին,
«Երևանի Ցայտաքարին».
Որ ի պատիւ ջրի հարցի,
Գործը առնի բոլ իր կարգին
Վայելչութեան սատիճանին։

IV

Որովհետև այս ապրիլին
Լրանում է վերջի տարին,
Թէ ջրանցքը նա չ'շինէ,
Ձիաքարշից պէտք է զրկւէ։
Կապալառուն էլ մտածեց,
Մի նոր միջոց առաջարկեց,
«Տւէք դուք ինձ նոր ժամանակ՝
Ես ձեզ կտամ ջուր անսպառ
«Նորքաջրի» սառն աղբիւրից
Առաջիկայ հոկտեմբերից
Տասնհինգ հազար դոյլ օրական
Թող էլ լինի այդ բաւական։

V

Դեկտեմբերի մօտ վերջերին,
Քաղաքացիք խորհուրդ արին.
Տւին նրան նոր հինգ տարի
Ղրխբուլախի ջուրը բերի.
«Մայիսարխայից ազատւելու
Համար պէտք էր ճար գտնելու.
Մենք այդ սրտով ցանկանում ենք
Գոնէ մաքուր ջուր կ'խմենք։
Բայց երանի հաւատողին,
Հոկտեմբերի ջուր խմողին։
Մեծ ջրանցքին շքեղ թաղում
Կը կատարենք «Նորքա ձորում»։

Մ. Ենգիբարեան

---

## Դ Է Մ Ի Ց—Դ Է Ն Ի Ց

—Երևակայում եմ ինչ կը լինէր, եթէ Տարաս Բուլբան այժմ Պետերբուրգ գնար։
—Առանց իրաւունք զէնք կրելու համար՝ տուգանքի կենթարկէին։

—

Ծանր Նախատինք։—Ռուսը խօսում է ֆրանսիացու հետ

Ֆրանսիացի։—Ձեզ, ռուսներից մօտ ան կարգութիւն է տիրում... գողութիւն, պաշտօնեաների կողոպտում, կամայականութիւն, ագահութիւն...

Ռուս։—(յօնքերը կիտում է և լռում, յետոյ թունալից ծիծաղում և յարձակւում է ֆրանսիացու վրայ)—Իսկ ձեզ մօտ... ձեզ մօտ դրա փոխարէն... ֆրանսիացիներից մօտ... լեզւի մէջ անկանոն բայեր շատ կան։

—

## ԱԽԱԼՑԽԱՑՈՑ ԱՖՕՐԻԶՄՆԵՐ

Ամենահազւագիւտ բանը Ախալցխայում.՝
—Գտնել մի ընկերութիւն, որի նախագահը բժիշկ Այվազեանը չլինի։
Ամենամեծ թիւրիմացութիւնը՝
—Բժիշկ Այվազեանի Պետական դումայի անդամ ընտրւելը և իւր համոզմունքների համար բանտ նստելը։

—

Աշակերտ։—(Հարցնում է կրօնուսոյցին) Տէր-հայր, այժմ չի՞ կարելի խոստովանւել։
Կրօնուսոյց։—Ոչ. մեծ պասն անցել է։
Աշակերտ։—Ապա ինչպէս է, որ պ. Ց. Տէր-Միրաքեանը խոստովանւել է և դեռ հալա թողութիւն էլ ստացել։
Չես հաւատում, կարդա «Նոր-դարացի» № 3 ում, նրա «մի բացատրութիւնը»։

Հաւաքեց՝—Նարան

---

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ

## Կ. ՊՕԼՍՈՒՄ

Տաճկական կարճատև սահմանադրութիւնն այն օգուտն ունեցաւ, որ այնտեղի մեր ազգայինները, կարողացան անձամբ անձին ծանօթանալ կեանքի և բեմի գերասանների հետ, որոնք տարիներով մեզ մօտ էին գործում և օգտւելով ազատ երկրի հիւրասիրութիւնից, շտապեցին Պօլիս։

Գնացին մեր կեանքի գերասաններից շատերը և դրանց համը այնտեղ էլ տեսան։

Գնացին և Աբելեան—Արմենեանի, Յարութիւնեան—Մայսուրեանի և Վրոյր—Աւետեանի խմբերը զուտ զատ՝ ու պօլսեցիք զարհուրեցան։

—Ծօ՛, սա կովկասահայք ի՞նչ կը կարծեն կոր, մենք դրա՞մ կը կտրենք, թէ՞ շանտաժով կապրենք նէ, որ տեղէն ելլողը հոս կը վազէ։

Վերջերս Վրոյր—Աւետեանի խմբի մասին խօսելով՝ ահա թէ ինչ են գրում։

—Կովկասահայ երրորդ խմբի ղեկավար Պր. Վրոյրի խաղն ալ տեսանք։ Աս ան Վրոյրն է, որուն քանհինգամեայ յոբելեանը կատարեցին Պարու և Թիֆլիզ։

Բայց վա՛յ փարաներուս. սաանկ ալ դերասան տեսած կայի՞նք։ Եթէ կովկասցիք ասպէս դերասաններուն յոբելեանը կը կատարեն, մենք ինչու անոնցմէ յետ մնանք։ Մենք ալ ունինք մեծ թւով ժամհարներ ու թաղումպաճիներ, որոնք յիսուն-վաթսուն տարիներ՝ իրենց համար աշխատեր են. առանց յոբելեանն ինչու չենք կատարեր. անանք Վրոյրէն բարեխիղճ են կատարեր իրենց գործը

Գացէք կովկաս, ո՜վ վաստակաւոր և ծանրաբեռնեալ թաղումպաճիներ ու ժամհարներ. հոն զձեզ կը գնահատեն և անպատճառ յոբելեաննիդ կը կատարեն։

Շատ տեղին է պօլսեցիների սամծերը մեր վերաբերմամբ։ Իսկ Վրոյրն ուրիշ իրաւունքներ էլ ունի, թէև Բագւի ցիրկում, իր յոբելեանի օրն ասել էր հետեեալ ճակատագրական խօսքերը.

—Հայեր, ինչ որ ձեզ համար արել եմ, ձեզ հալալ լինի։

Բայց եթէ պօլսեցիք գային ու տեսնէին, թէ նա ինչպիսի խմբագիր է «Ցուցարար»

գեղարուեստակա՞ն» և թատերակա՞ն???!! հանդիսի, այն ժամանակ գուցէ էլ այդպիսի բան չասէինք։

Երբ նա իր թատերական թերթում, մանաւանդ Հայրիկի անձնաւորութեամբ է զբաղւում և Բերլինի դաշնագրի մեկնութիւններով է լցնում, ինքնըստինքեան հասկանալի է, թէ մեզանում թատերական հանդէս է «Յուշարարը» և նրա խմբագիր գերասան Վրոյրը, որ ոչ միայն այնինչ է հասկանում գերասանական—արտիստական արուեստից, այլ նոյն իսկ բեմի վերայ,—ինչ եմ ասում, փողոցում էլ քայլել չգիտէ, ինչպէս և հայ գերասաններից շատերը։

Մախաթ

---

## ԶԱԿԱԶՆՈՑ ՆԱՄԱԿ ՀԻՄԻԿՒԱՅ ԱՇՏԱՐԱԿՑՈՒՑ

Հիմիկւայ աշտարակցոնց եմ ասում, չունիք էս Աշտարակը էնքան ուրիշ ա, ինչքան Պռոշեանցի Աշտարակը ուրիշ էր. իրան հասարակութիւնով ու վարքով։

Էն վաղի Աշտարակը մենակ ա. Քաղած ա Ներսէս 5-րդի և Սօս ու Վարդիթերի կողքին։ Աստուած հոգին լուսաւորի. շատ ազնիւ ու պատուական բան էր էդ Աշտարակը։

Էս թաղայ Աշտարակը շինել ա 1902 թւից դէսը, իրանց ասկի փրկիչ համարող, ակատիրութիւնը փողրաթով վէկալած մարդկանց ձեռով։

Էս Աշտարակը մի խոկական Սոդոմ Գոմոր ա. էդտեղ ոչ ապրել ա ըլնում, ոչ էլ կողքովն անց կենալ։ Գլուխը մի սախ ա դառել, կռիւն ու թշնամութիւնը ամէնօրական բան։

Դրանց ոչ հացն ա ուտել ըլնում, ոչ էլ ջուրը խմել, չունքի ոչ մեկին ա հանդիստ թողում գերեզմանումը, ոչ էլ աղերին են արխէյին, որ մինչըու իրիկուն ամբողջ կը թեան, ու գլուխները վրէքնիրը կը թեայ։

Ու բարրա համար էլ, էս գոհացնոյ նամակովս դդուշացնում եմ էդ հիմիկւայ աշտարակցոնց, որ իրանց գիւղի հասարակութեան ազիզօկի միջից հանեն մի փարա անունների հետ ի մասին, նախ անգին Պռոշեանցի Ֆամիլիէն, եղով Ներսէս 5-րդ Կաթողիկոսի պաշտելի անունը։ *) Սմբաթ Շահազիզեանը, Դօլոյեանց վարժապետները և այլն, որոնց յիշատակը պիտի որ անպատիւ կլնի, եթէ հիմիկւայ աշտարակցոնց կամիրալնի դաւթարումը թեայ։

Եթէ համարձակւէք այսուհետև ասելու որ դրանք մերն են, Աստուած վկայ, էնպէս կանըծեմ, որ դրանից էլ վատ օրը կընկնէք։

Դրանց փոխանակ Ձեր ազիզօկում պիտի պահէք Սմբաթ Շահազիզովի անարժան ժառանգների՝ բիրդան—աղէքի անունները, որ Սմբաթի փողերով բիրդանարիք ազա դառան, հարստացան ու եախէքներումը քաշեցին ասկին կտակած 10 հազար մանէթը կերէք, հարամ ըլնի ձեր օխտը պորտի դըլխին։

Ձեր ազիզօկում պիտի պահէք կնիկ ու հարս ազատողների անունները ձեզանում։

Ձեր կամիբալում պիտի պահէք գերեզմաններից ու ժամից մենակ դոզանոցների ֆամիլէքը։

*) Սրա անունը կը տանեմ մեր գիւղի դաւթարում, ինչ բանեից ձեզ կըտամ ասիք մի զզնձի մէջայի ծախած Օհանէս Պարզեցու ֆամիլէն։

---

# ՖԵԼԻԵՏՕՆ

## ՊԵՏՐՈՍԻ ԿՏԱԿԸ

(Этюдъ съ натуры)

Համբաւաւոր գինեվաճառ Պետրոսը շատ հարուստ մարդ էր համարւում Թիֆլիսի մէջ։ Ունէր տներ, խանութներ, այգիներ։ Ուտում խմում էր փառաւոր կերպով, յաճախում էր ցիրկ ամեն օր, վերջապէս չէր զրկում իրեն ոչ մի զւարճութիւնից։ Նա չգիտէր ինչ ասել է բարեգործութիւն, մինչև անգամ իր կեանքում ոչ կոպէկ տուած չէր աղքատին։

Թիֆլիսում կար և վաճառական, որ Պետրոսի հակապատկերն էր, թէ ճաշակի և թէ առհասարակ բոլոր սովորութիւնների նկատմամբ։ Բայց և այնպէս նրանք զանազան հանգամանքների շնորհիւ, յաճախ հանդիպում էին իրար։

Եփրեմը (այսպէս էր երկրորդի անունը) լինելով ազգասէր, հետեւապէս կտակների սիրահար, մտադրել էր համոզել Պետրոսին ազգօգուտ և նպատակայարմար կտակ կազմելու։

—Այսօր կանք, վաղը չը կանք,—անդադար կրկնում էր Եփրեմը,—մի գիտէ քո մահից յետոյ, գուցէ զաւակներդ ամբողջ հարստութիւնդ մի տարւայ ընթացքում վատնեն, այն էլ ամենաանվայել կերպով...

—Ձեռք վերցրու ինձանից. ախպէր,—պատասխանում էր ամեն անգամ Պետրոսը,—ես մեռնող պտուղ չեմ, դեռ էդ քարոզները ուրիշ ախմախների գլխին կարդա...

Բայց Եփրեմը յոյսը չէր կորցնում, ջանում էր ամեն տեսակ միջոցների դիմել կտակը յաջողեցնելու համար, նամանաւանդ որ շատ մարդկանց առաջ պարծեցել էր այս բանի մասին։

—

Տաճկահայաստանում եօթնաւուն ութ թւականի պատերազմից յետոյ սով էր։ Թիֆլիսի առաջնորդարանում ժամանակով էր կազմած, որը ամենաեռանդուն կերպով փող էր հաւաքում և ուղարկում Պոլսի պատրիարքին։

Եփրեմը հաստատ համոզուած լինելով, որ Պետրոսի «ջանից» կոպէկ անգամ չի դուրս գալու, դիմեց խորամանկութեան։

Գիտես, Պետրոս,—ասաց Եփրեմը քաշելով նրան իր խանութի ամենախուլ անկիւնը,—գաղտնիք եմ յայտնելու քեզ, շատ քիչ մարդ գիտէ, Տաճկահայաստանի համար հայոց իշխան են ընտրելու և այդ բանի համար առաջնորդարանում ականաւոր հայ մարդիկ, իրանց համաձայնութիւնն են յայտնում, ստորագրելով կազմած թուղթը։ Վերջը, երբ իշխանը կը ընտրեն, այն ժամանակ կը տպագրեն բոլոր ստորագրողների անունները։

Այս բանը դուր եկաւ Պետրոսին, խոկոյնեւեթ շտապեց առաջնորդարան և ներս նետւելով դահլիճը, աղաղակեց «ես էլ դարում եմ»։

Հիացաւ նախագահը, հիացան նոյնպէս անդամներն ու ներկայ գանուող անձինք։ Ծափահարեցին «դարդիմանդին», նստեցրին առաջնորդի կողքին և նա ստորագրեց եղաւ նուիրել հինգհարիւր րուբլի։ Դուրս եկաւ այնտեղից փնթփնթալով ու ուշունց տալով իրան թակարդի մէջ գցողին։

—

Նոյն օրնեեթ երեկոյեան՝ հանդիպեց Եփրեմին։ Ծիծաղելով շնորհակալութիւն յայտնեց որ իրան այդպիսի Աստուածահաճոյ խաբէբայութեան համար և իբրև ապացոյց, ինքը թէպէտ ուշքին յայտնի չէ, բայց առաջնակարգ ազգասէր է, հանեց գրպանից կնքած մի մեծ ծրար և յանձնելով բարեկամին, երդւեցրեց նրան, որ պէտք է իր մօտ պահի անվնաս ու անփոփոխ, մինչեւ տեսնենք Աստուած ինչ է տալիս։

Այդ օրից յետոյ անցան շատ տարիներ, Պետրոսը հիւանդացաւ ու մեռաւ։ Նրա մահը Եփրեմին անասելի ուրախութիւն պատճառեց, նա խոկոյն վազեց բոլոր խմբագրութիւնները աւետելու համար, որ հանգուցեալ Պետրոսը կտակ ունէր և այդ կտակը իր մօտ է պահուած։

Անմիջապէս յայտարարւեց անսպասելի կտակի գոյութեան մասին, շուտով որոշւեց ժամանակ ու տեղ ծրարը բանալու համար։

Առաջնորդարանի դահլիճում տեղ գտնելու տեղ չկար։ Այնտեղ կային բոլոր բարեգործական ու այլ հաստատութիւնների ներկայացուցիչներ, զանազան ընկերութիւնների ու զանձանակների նախագահներ և այլն։ Ամենքը փափագում էին, որ իրանց հաստատութեան համար էլ բաժին լինի հանած «ի տէր հանգուցեալ Պետրոսը»։

Ծրարը պատռեց։ Տիրեց կատարեալ լռութիւն։ Առաջնորդը հանելով ծրարի միջից թուղթը, յանձնեց քարտուղարին։

«Բարձր, բարձր» աղաղակեցին այս ու այն կողմից։

Քարտուղարը կարդաց։

«Շուլաւերցի հարամզադա, հէրդ անիծած...շ...շ.... . . . . .

Գնա, որտեղ քանն ասես, այնտեղ էլ իմ տաս»։

Գ. Բաշ.

Ձեզ արժան համարէք, նոյն իսկ պրիստա-ւի տունը կողոպտող, թալան տալ և լաւ գո-ղութիւն անել գիտցող սալախանէքի տնկ-անունները։

Ձեզ համար պահէք շատ պատուածների հետ ի միասին, Աղասենց Կարօյի, տէր Թաթէոսի և այլոց սպանող դաշնակների յի-շատակները։

Էլ սանմ... ասելու շատ բան կայ. էսքանն էլ բաւական ա, ինչ որ կարելի ա հաստա-տել հիմնիկեայ Աշտարակու շատ ուրիշ լի-նելը։ Ի՞նչ չի տալիս հիմնիկեայ Աշտարակը։ Ափսոս, առաջեայ Աշտարակը ափսոս Աս-տուած հոգին լուսաւորի, շատ լաւն էր, ջան։

Փալանչօղլ Մկօ

### ԵՐԿՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—Ես քաղաքականութեամբ վարւեցի նրա հետ,—խլեցի նրա կինը. վերցրի հարիւր րուբլի իր վերադարձնելու համար և գո-ղացայ նրա աւտօմօբիլը։

—Իսկ նա՞։

—Նա էլ քաղաքականութեամբ վարւեց ինձ հետ—այնպէս ձեւացրեց իրան, իբրև թէ ոչինչ չի նկատում,

### ԴԱՌՆ ՀՐԱԺԵՇՏ

Կայարանի պէրրօնում. գնացքի մեկնելու ժամանակ։

—Թո՛յլ տւէք... Բռնեցէք դրան։ Բռնե-ցէք... Ա՛յ, դու անպիտան, գրպանից թա-շկինակս հանեցիր հա...։

—Ներեցէք, ես ձեզ բացատրեմ.—տեսա՞ք, տեսնում էք այն վագոնը, նրանով գնաց իմ ամենասիրելի նշանածս... Ես էլ մոռա թաշկինակ չունէի, որ հրաժեշտի ժամանակ օդի մէջ ծածանէի։ Եթէ դուք երբեւիցէ մէկին սիրել էք՝ ինձ թւում է, որ պիտի հասկանաք։ Անեղ Մախաթովիչ

### ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Երկու բարեկամ ուսանողներ անցնում էին միասին, որոնցից մէկն ինքն իրեն խօ-սում էր։

—Ի՞նչ ես ասում, Վահան։

—Ոչի՛նչ, եղբայր, քեզ հետ չեմ, ինձ ու ինձ եմ խօսում։

—Էհ՛, եղբայր, էլ խելքը գլխին մարդ չը գտա՞ր, որ այդ յիմարի հետ չը խօսես։

* * *

—Գիտե՞ս, բարեկամ, որ էն Գրիգորը յիմարի մէկն է։

—Իսկի՜ էլ չէ, նա փիլիսոփայութեան դոկտոր է, շատ խելօք մարդ է։

—Ա՛ն, եթէ այդպէս է, ուրեմն դուն յի-մարների թագաւորն ես։

—Ներիր, հոգիս, մեղաւոր չեմ, Աստուած քեզ պէս հպատակներ է տւել ինձ։

* * *

—Ողորմութիւն արա, աղաջան, աղքատ մարդ եմ, երեք օր է ոչինչ չեմ կերել։

—Գնա՛, յիմար. չես էլ ամաչում. մարդ պէտք է իր վաստակով ապրի։

—Երանի թէ այդպէս լինէր, այն ժամա-նակ քաղցած մեռնողներից առաջինը դուն կը լինէիր։

Սերվանտէս

### ՄԱՄՄԱԴ-ԱԼԻՆ ՈՒ ԻՐ ԷՇԸ

Մամմադ-Ալին անձնապատուտան թուրք էր։ Նա ամեն բան գիտէր և ամենից լաւ էր հասկանում ամեն ինչ։

Իրենց գիւղում միակն էր աստղաբաշխ-ական, դաւանաբանական, քաղաքագիտա-կան և այլ խրթին ու խորին գիտական հարցերի մէջ։

Թէպէտ գիւղից ամենևին դուրս չէր ե-կած՝, ուրիշ տեղեր չէր տեսած, բայց ին-քնավստահ բացատրում էր Բաքուից վերա-դարձած համագիւղացիներին,

—Ինչպէս է շինում տելեֆօնը, ինչպէս է գործում հեռագիրը, ինչպէս է շարժւում երկաթուղին։ Գիտէր տպագրութիւնը, նա-ւաշինութիւնը, խալի գործելը, անծուխ վա-ռօդը, գինամիրը, երկրաշարժը—մէկ խօս-քով ամեն բան գիտէր, ամեն բան հասկա-նում էր և ոչ մի բանի համար, ոչ ոքից խորհուրդ հարցնելու կարիք չէր զգում։

Պատահում էր գրացիները նկատում էին։

—Մամմադ-Ալի, դեռ վաղ է, ոչխարդ դուր ես խուզում։

—Ես իմ բանը լաւ գիտեմ, որքան շուտ շուտ խուզեմ, այնքան շատ բուրդ կստանամ։

—Աղբէր, դուր ես արտդ ջրում, մի շա-բաթ է զօր ու գիշեր անձրև է գալիս։

—Դուք չէք հասկանում, այս մի շաբաթ-ւայ անձրևը մի կոպէկ չարժէ, ես լաւ գի-տեմ ինչ է անձրևը, ինչ է ջրելը։

Այսպէս, Մամմադ-Ալին անձնապատուտան ու ինքնավստահ, առանց շուրջը նայելու, առանց խորհուրդներ լսելու, անում էր այն, ինչ քէֆն ուզում էր։

Սրանից շատ էր տուժում, բայց իր ա-ռածի մարդ էր Մամմադ-Ալին և երբէք չէր ցոյց տալիս, թէ ինքը սխալուած է ե-ղել։

Կեանքի մէջ առաջին անգամ Մամմադ—Ալին եկաւ նոր պատրաստուած երկաթուղու կայարանը։ Հեծած աւանակը կապեց երկա-թէ վանդակից, բեռը վրայից վար առաւ, տեղաւորեց վագոնի մէջ։ Նա չէր ուզում ցոյց տալ, թէ ինքը խակ է, ամաչում էր։ Մեծահատութեամբ հասկացաւ, որտեղ են ծախում տոմսակ. վստահ քայլերով գնաց, առաւ առաջին կայարանի համար ու դուրս եկաւ։

Երկրորդ զանգը տւին, գնացողներն շտա-պեցին լցւել վագոնները։ Մամմադ-Ալին իսկոյն հասկացաւ, որ զանգահարելու ժամա-նակ չէ, էշը վանդակից արձակեց տարաւ կապեց վերջի վագոնին, շտապ-շտապ վե-րադարձաւ, գտաւ իր վագոնը ու հանգիստ տեղաւորւեց։

Գնացքը շարժւեց, Մամմադ-Ալին ան-ներին ցոյց չտւեց, թէ առաջին անգամ է երկաթուղի նստում։ Հանգիստ ու ապահով ուղեկիցների հետ խօսելով հասաւ առաջին կայարանը։

Վերցրեց իր շորերը, վար իջաւ ու գնաց վերջին վագոնից էշն արձակելու։

Բայց այնտեղ գտաւ միայն էշի կապն ու մաշւած ականջները։

### ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

6 ապրիլի.

Է՜հ, պարոն խմպակիր, ինչ անենք, որ Աստուած մեզի ստեղծիր ի կեղացի, որ կեղա-ցի էլանք հէնց բաժին պեան է էլ դուրկ պէտք է մնանք։ Լսիրենքէր, որ Թիֆլիզ քաղաքը մէ լակիր ին ապելի «Խաթբրա-լա» անունով, խմա էրեսը չենք էր տեսի, էլ ասհմեաթ «պարեկօրծակեաններին», որ պերել տեսաէն կլատարանի խմար, մենք էլ մէկ-մէկ էթանք, տրնատնք։ Դուզ, պ. խմպակիր, ինչ ապեկ պեան ի էտ քեռ «Խաթբալալան», ինչ ապեկ հունար ես գի-տի, ինչքեան մեծա-մեծ մարթներ ես ներ-կելի խորտ խորտ ռեանգներով, ինչ պետուտար պեանէր ես կրեյի զարգ խմա։ Որ էանեց ի պ. խմպեակիր, ինչ կլի որ մէկ-մէկ էլ մեր կեղի վրա ուշադրութին էնես. մեր կեղի մէջ էնքեան պատուտար մարթներ կան խորտ-խորտ ռեանգներով ներկելու արժանի... էլ վարժապետ, էլ բաղեաղ, էլ դոխթուր, էլ գլաւա, ակէ ես իմ խոքին, պ. խմպակիր, որ դարցն էլ մէկ մէկ պատռի ըներ ներկես, մեր կեղացիներին պարտուրացուցած կըլնես։ Մէ տրա-նաս մեր ցիլինդրաւոր վարժապետները ինչ-քեան սարօղ են վարւելի աշկերտների խետ... որ աշկերտը դասը չի սովրելի, ես թէ չէ, չարութին ի անելի, պ. վարժապե-տը, գըմռուկով, աշկերտի քիթն ու մութը արուընլըւա ի անելի, ես թոփ քիմին սիլ-լայելի։ Մէ ըշկես վարժապետներիան հո-բաբարցումները, ինչխօյեն իրանց չուզած վարժապետներին դուս շպրտելի, ինչ վախթ գուղի ըլնի, սեկտեմբերին, խոկտեմբերին, խունուարին... խմա փողերը տասն գինա, պ. խմպակիր, ջայնամը, որ շկօլը աղքատ ի, թո մէ խինդ խատ էլ էանեց էթա։ Ա-սեսէն էն, Նազնազեանց վարժապետը, շատ սարօղ ի. աշկերտը հետյա ծէն չխանած, պ. Նազնազեանցը պըռքըսկինի եղուցելի։ Ա՜յ դուշաղ վարժապետ, հալլաթ քի, որ էանեց էլ պէտք ի... ուրիշները սովրեն, որ վար-ժապետը մեզմ պըտի վերաբի աշկերտի խետ, ը՞հ, դուշ նազլեր... բաւի մէկը պ. Նազնազեանց չի ըլնի։

Այ դար խմար էլ, մեր իմաստուն խո-բաբարցումները, սեկտեմբերէն մինչի մէկ խինդ վարժապետ ի դուս արած, խմա իս-կի պ. Նազնազեանի խաթրին չի կպնած։

Մէկ էլ որ իմանաս մեր զօխտուրի խմա, պ. խմպակիր, մէ տրանաս ինչ թար սա-

տա ի, խելի խիւանդին չի չարչրելի, սուսը փիւս գրկելի էն տխշար։

Որ ըմենն ըսեմ, պ. խմբագիր, կը ըշ-կեսա, որ մեր կեղն էլ շատ արժանաւոր մարթներ կան, քեա սուրփ ներկով ներկելու Պ. խմբագիր, խնթրեսեմ, որ քի կարե-լի ի էս նամակըս տպես քեօ «Խաթաբա-լայի» մէչ. մէկ-մէկ էլ մտածես որ էն, Սուրմալուայ ուեզըն էլ մէ տեղ ի. ընդա էլ պատուաւոր մարթներ կան։ *)

Ընթունիր ողջունեսըս.

Մնամ

Աւել

# ≡ ՊՈՍՏ-ԱՐԿՂ ≡

Թիֆլիզ.—Անմիտ «Միտքի» խմբագրին. Արշ. Եղիազարեանին։
Աշխատում էք, որ ձեր մասին խօսենք։ Հաւատացնում ենք դուք էք չարչար-ւում։ Զարմէ… ուրիշները կը կարծեն թէ մարթու մասին ենք խօսում։

Ս. Գէորգեանցին.—Ուղարկեցէք տեսնենք. տեսնես՝ գալթայ էլ չեն ուտում։

Ախալցխա.—Ասեղ Մախաթովիչին.—Տե-ղից ասաց վարձուհու համար, էս ինչ բաներ ենք լսում, իսկ դուք էլ պա-պանձել էք, բան չէք գրում. ճիշտ է։

Բաթում.—Ճնտրիկ Աբեղային.—Դու խօ չես ուզում, փիլոնդ վեկալնել տամ ու ծովի տղաք կաղնացնեմ մեղայ ա-սելու։ Արշակ աղա Զիլինդերովը ճիշ է, վուր դրա համա էն թաւուր չհա բաներ խօ խնթրում։ Մենք խօ էշմի-ածնի Սինօթը չենք, ան Թիֆլիզի կոնցլիստոր, վուր ամեն ծրտի-պրտի բան վիկալնենք ու քննենք։

Բերդ-Հէյրաթ.—Ար. Զաքարեանցին.— Ժամանակ անցկացնելու համար ամե-նալաւ բանը՝ գլուխը քարով տալն է, քանց թէ թուղթ խաղալը։

Վեսոլիէ-Տէրնի.—Գ. Զալխալճեանին։ Ձեզ ամսիս 7-ից կանոնաւոր թերթը ուղարկւում է №՝1-ից։

---

*) Աղէկ, աւսես քի ձեր կեղի մենծ մենծ մարթերուն չարքիներն էլ «Խաթաբալին» մէչ քեաշենք. կուզես քեզ էլ խետը քեա-շենք, խմա ներկի փողը քեզնեն կառ-նենք խա…

Խմբ.


# № 4711 ՃԱՐՊՈՏ ՑՊԱՐ
жирная пудра
ազնիւ, վարդագոյն և դեղին. Պատրաստուած է ամենամաքուր նիւթե-րից, որոնք կաշու համար վնասակար չեն, և մարթին կակղացնում ու քըն-քշացնում են։

**ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ**

Քէօլն Ռայնի վրայ և Րիգա, Նորին Կայսերական Մեծութեան դատ մատակարար։

**Ферд. Мюльгенсъ**
Кельнъ н|Рейнѣ, отд. въ Ригѣ



# ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ
ԿԱՆԱՆՑ ԳԼԽԱՐԿՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ-ՄԱԳԱԶԻՆ
## Մ. Է. ՄՈՐՑԵՆԻ
(Գօլով. պրոսպ. տուն Աբիեանցի, Արտիստիկ Թատ. կից)

Ապրիլի 20-ից մինչև 1-ն մայիսի նշանակ-ւած է, գլխարկների գներս Թիֆլիզում չե-գած էժան վաճառք։

## ԾՂՕՏԷ ԳԼԽԱՐԿ 75 Կ. ԵՒ ԱՒԵԼ
ՄԵՏԱՔՍԷ ՎԵՐՆԱՇԱՊԻԿ 3 Ր. ԵՒ ԱՒԵԼ

Բացի կանանց գլխարկներից, պանամա-ներից, վերնաշապիկներից, ամեն տեսակ լուսթերից՝ կան և արտասահմանեան գործւածքներ և շլեապաների ու գգեստների արդ ու զարդեր։

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ

Խնդրում ենք տեսնել Թիֆլիզի մագա-զին պլոմբները։

Որովհետև, բոլորովին պատահմամբ, ու-ղակի ֆաբրիկայից ենք ձեռք բերել ապ-րանքները շատ էժան գներով, ուստի նը-շանակել ենք այնպիսի գներ, որ ուղղակի անսալի է էժանութեան տեսակէտից։

## 15,000 ԱՄԱՌԱՅԻՆ ԳԼԽԱՐԿՆԵՐ
**ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ**



# ՕԳՏՒԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ
## ԱԶԴ
# ԵՂԲ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
Տղամարդկանց, կանանց և երեխաների պատրաստի հագուստեղէնի տ ո ւ ն,
Նիկոլայեւսկի կամուրջ տուն Քամոյեւի

Պ ա տ ի ւ ո ւ ն ի յ ա յ տ ն ե լ ո ւ պ. պ. գնողներին, որ

# ԽԱՆՈՒԹԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ
ապրանքն մնում է կարճ ժամանակ,
որի համար և շտապել օգտվել հազուագիւտ դէպքից։

# ՕԳՏՒԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ

ՕԳՏՒԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ

ՕԳՏՒԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենայնը Աշխարհում



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածուող նիւթերից։

ԱՆԳԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕ-ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐՂ ԽԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ ԱՐՏՕՆԻԱԾ

Ն ԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Ի Ն Ի Ե Ւ Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ

1888

ОТКЫТЪ

„КАФЕ-ЛОНДОНЪ",

на Головинскомъ просп., въ домѣ Манташева, № 6, подъ Общественнымъ Собраніемъ, гдѣ постоянно имѣются: фруктовыя минеральныя ВОДЫ исключительно усовершенствованнаго завода М. Е. Лагидзе и К°, а также: кофе, чай, шеколадъ, какао, молоко, кислое молоко (мацони) мороженное, пиво мѣстное и призозное найлучшихъ заводовъ, разныя холодныя закуски, бутеръ-броды, горячіе пирожки и пирожное. Во всемъ образцовая чистота и аккуратность. При кафе имѣется садикъ съ фантанами. Содержатель А. Мепаридзе и К°.

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ շարունակում են կեղծել մեր էտիկէտները, որպէսզի ծախեն իրենց աւելի վատ ապրանքը, գործադրելով արկղիկների և կապոցների միատեսակ ներքին ու մարկան, փոխանակ բոլորին յայտնի

ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՍԻՄՊԱՏԻԱ 10 ՀԱՏԸ

№ 8 10 ՀԱՏԸ 5 Կ.

Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ։ Մեր պ. պ. գնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ և ազգանունին

Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ


Խմբագիր-հրատարակող ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.



### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

—Մուստաֆա. սկսենք, փողը հնչեց,

—Ի՞նչ սկսենք Օսման ջան,

—Հայերի կոտորածը։

—Ի՞նչու համար։

—Շարիաթը վերականգնեց։

—Էհ ինչ անենք որ։

—Սուլթանը, Շաքիր փաշան հրաման են արել—սահմանադրութիւնը ոչնչացնել։

—Դէ՛հ որ հրամայում են, մեր պարտքն է հրամանը կատարենք։

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

—Օսման-աղա, խելքդ ինչ է կտրում. սահմանադրութիւնը մեզ օգուտ կը տա՞յ։

—Որ տալու լինէր, էնա հօ Սուլթանն էլ սահմանադրական կը մնար, բայց որ նա տեսաւ, թէ գեաւուրներն էլ պէտք է մեզ հետ հաւասար լինեն, աչքն էլ հանեց, շարիաթը մէջ առեց բերեց։

—Շարիաթը ինչ է ասում։

—Ինչ որ լաւ բան կայ՝ ուղղահաւատին պէտք է լինի։

—Սահմանադրութիւնը։

—Ամենքը հաւասար են։

—Է՜հ, ինչպէս կարող են մարդիկ հաւասար լինել, երբ մէկը բարձր է, միւսը ցածր, մէկը հաստ, միւսը լղար, մէկը խելօք, միւսը գիժ, մէկը հարուստ, միւսը աղքատ. մէկը...

—Սուլթանն էլ էտ է ասում է։





ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՎԱՆՔԸ ԱՃՈՒՐԴԻ (տես բնագիր)



ՀՈՅ ԱԶԳԱՅԻ՛Ն ԳՈՐԾԵՐԻ ՇԻԼԱՓԼԱՒԸ